

2. 2. Մ Ո Վ Ս Ի Ո Ց Ա Ն

ՆՈՐ ՀՆՐՈՍԻ ԿԵՐՊԱՐԸ ԲՈՋՈՐԳ ԱՆՎԻՆՆԵՐՈՒՄ

Իրանական անվանի գրող Բոգորգ Ալավին անցել է գրական-գեղարվեստական զարգացման երկար ուղի, վերապրելով ստեղծագործական որոնումների մի բարդ ժամանակաշրջան: Եվրոպայի մի շարք գրողներ, այդ թվում և Ս. Ցվեյգը, մեծ ազավորություն են գործել երիտասարդ հեղինակի վրա: Նա մեծ հիացմունքով է խոսում Ս. Ցվեյգի մասին. անվանելով նրան «Գրական հանճար»¹ թարգմանում է նրա «Սպիտակ ծաղիկներ» պատմվածքը, որը 1933 թ. լույս է տեսնում («Աշխարհ») հանդեսում²: Բ. Ալավին միևնույն ժամանակ եղել է և ռուս մեծ գրող Դոստոևսկու ազդեցության տակ: Նրա պատմվածքների երկրորդ ժողովածուն՝ «Հուշագրեր բանտից» (1942 թ.) մեզ հիշեցնում է Դոստոևսկու «Заметки из мертвого дома» մեմուար աշխատությունը³:

Բ. Ալավին կրել է նաև իր ազնիվ ընկեր, հուշակավոր գրող՝ Սադեղ Հեդայաթի ստեղծագործության ազդեցությունը: Հայտնի է, որ 30-ական թվականներին Ս. Հեդայաթը գտնվում էր բուրժուական իդեալիզմի փրկիսոփայության ազդեցության տակ և նրա պատմվածքների զգալի մասը կրում էր հոռետեսության ու միստիցիզմի խորը կնիքը:

1935 թվականին Բեռլինում լույս տեսած Բ. Ալավիի առաջին ժողովածուի («Չամադան») պատմվածքները զուրկ են տոցիալական կյանքը արտահայտող կարևոր խնդիրներից: Այդ պատմվածք-

¹ Տե՛ս «Փայամե նոու» ժուռնալ, 1948 թ., № 6—7, էջ 188:

² «دنيا» Ա. տարի 1933 թ., № 1: Թարգմանությունը ստորագրված է կեղծանվամբ՝ «Ֆերեյդուն Նախոդա»:

³ Բացի այդ Բ. Ալավին, 1959 թ. փետր. 9-ի մեզ ուղղված իր նամակում խոստովանում է, որ արտասահմանյան գրողներից ամենաշատ իր վրա ազդեցություն է թողել Դոստոևսկին:

ների թեմաների հանգույցը հեղինակը մեծ մասամբ կառուցում է սիրո, կրթի, խանդի և մինչև ոճրագործությունների հասնող կոն-ֆլիկտների հիման վրա, որոնք այսպես թե այնպես, լուծվում են պատահական խիստ ողբերգական վախճանով: Այս ժողովածուի պատմվածքների հերոսները սովորաբար տառապում են հոգեկան հիվանդությամբ: Նրանք դիմում են արտասովոր արարքների, ստեղծելով իրենց համար ահավոր ապրումների մի աշխարհ: Այս հանգամանքն բացասաբար ազդելով պատմվածքների դեղարվես-տա-գաղափարակաՆ կողմի վրա, տալիս է թեմատիկային միօրի-նակություն և սահմանափակում է հերոսների գործողության լայն հնարավորությունները: Բայց և այնպես, պաթետիկ նկարագրու-թյունների մեջ նկատվում են հեղինակի երբեմնի ռեալ որոնումները: 30-ական թվականներին դեռևս խորապես չգիտակցելով սոցիա-լական կյանքի հեռանկարները Բ. Ալավին այնուամենայնիվ զգում էր, որ Իրանի հասարակական կյանքի ընդերքում անդադար աճում են նոր անհաղթահարելի ուժեր: Ալավին որոշակիորեն լսում էր երկրի առաջադեմ ինտելիգենցիայի հասարակ մարդկանց զայ-րացկոտ բողոքի ձայնը, որոնք անկարող էին հաշտվել իրենց շրջա-պատում տիրող անիրավությունների հետ: Նրանք ագահաբար որոնում են ճշմարտությունը նախազգալով նրա հաղթանակը: Այդ հերոսները անընդունակ լինելով պայքարելու հասարակական կյանքի խոչընդոտների դեմ, այս կամ այն կերպ հակադրվում են դառն իրականության հետ և խիստ հիասթափված ընկնում՝ նոր կյանք որոնելու ոլորտը:

«Զոհ»¹ պատմվածքի հերոս Խոսրոն՝ արտակարգ զգայուն մի երիտասարդ, չհաշտվելով կյանքում տիրող անարդարությունների հետ, փնտրում է այն, ի՞նչը կարող է երջանիկ դարձնել նրան: Սակայն իր անվերջանալի խոհերի մեջ նա դեռ անկարող է գտնել երջանկության ուղին: Խոսրոն մահամերձ հիվանդ է: Նա չի հա-վատում նաև իրեն նվիրված աղջկան—Ֆորուդի բուռն սիրո զգաց-մունքներին: Խորապես զգալով դառը իրականությունը, ապրելու ծարավը չհագեցած, Խոսրոն իր տրտունջն է հայտնում ընկերոջը:

هیچ میفهمی که من چه میکشم هیچ میدانی که من چگونه میسوزم
من در بهبو چه جوانی باید بمیرم، برای چه فقط برای آنکه از دیگران
بهترم، فقط برای آنکه بیشتر چیزی میفهمم از آنچه دیگران لذت
میبرند من زجر میکشم²

¹ بزرك علوی، قربانی، «چمدان» تهران ۱۹۴۲

² Բ. Ալավի, «Զոհադան», էջ 32:

«Բու հասկանում ես, թե ի՞նչ վիշտ եմ կրում ես: Գիտես, ինչ-պե՞ս եմ այրվում: Ինչո՞ւ պետք է ես երիտասարդ—ծաղիկ հասակում մեռնեմ: Միայն նրա համար, որ առավելություն ունեմ ուրիշների համեմատ: Միայն նրա համար, որ ես ավելին եմ հասկանում: Այն ինչ ուրիշներին հաճույք է պատճառում ինձ տանջում է...»:

Բ. Ալավիի ճշմարտությունը որոնող հերոսներից է նաև «Հազարիկեսա հարսը»¹ պատմվածքի երաժիշտը: Մանուկ հասակից նրան հրապուրել է սքանչելի մի մեղեդի: Երգը նրա մեջ արթնացրել է երաժշտության անմար կրակ: Նա դարձել է երաժիշտ: Սակայն ո՞ւր է այն երգը: Երաժիշտն ուզում է ստեղծագործել: Նա տենչում է մանկության նման անաղարտ, բյուրեղյա երաժշտություն հորինել: Բայց ավաղ, կյանքի պայմանները, նրան շրջապատող հղիացած մարդիկ պատնեշել են ստեղծագործելու նրա հնարավորությունները: Կարիքը ստիպում է երաժշտին զվարճացնելու մարդկանց կաֆեններում ու ռեստորաններում: Տասնհինգ տարի շարունակ նա թափառում է քաղաքից քաղաք, սակայն ամեն տեղ նույն կարիքը, նույն մարդիկ կարծես հետապնդում են նրան ծաղրի ենթարկելով նրա զբաղմունքը:

Երաժշտի դատավճիռների մեջ զգացվում է սոցիալական բողոքը:

مرحم از کجا میدانند که چه توهایی با او بازی میکنند کی میدانند که چه عوامی، اورا اینطور کرده است²

«Մարդիկ ի՞նչ գիտեն, թե ինչպիսի ուժ է նրան շարժում: Ի՞նչպիսի գործոններ են նրան այդ վիճակին հասցրել: Ժողովածուի մեջ ուշադրություն է գրավում սիմվոլիկ վերնագիր կրող «Արճիճն զինվորիկը»³ պատմվածքի հերոսուհի Քոքարը:

Երիտասարդ այդ կնոջը, բանակ դնալու պատճառով թողել է ամուսինը: Քոքարն իր գոյությունը պաշտպանելու համար աղախություն է անում հարուստ մի ընտանիքում և ապրում է այն օրվա հույսով, որ սիրելի ամուսինը վերադառնալով բանակից նորից կմիանա իրեն: Նա սրբությամբ է պահում իր մոտ արճիճն զինվորիկի մի արձան, որը հիշեցնում է նրան իր ամուսնուն և նրա մոտալուտ վերադարձը: Սակայն բուրժուական բարոյաբանականությունը

¹ Բ. Ալավի «Չամադան» էջ 37, عروس هزار داماد

² Նույն տեղում, էջ 41:

³ Նույն տեղում, էջ 71, سرباز سربى

նր քոքարին շեղում է կյանքի ուղիղ ճանապարհից: Նա սկսում է վարել անբարոյական կյանք:

يکزن تنها در يك سيمر بيگس چه ميکنه، منکه کار بلد نبودم. برای اینکه جوون بودم هر جا که میخواستیم کلفتی بکنم خانم راضی نمیشد اگر خونه خانم نداشت که از دست اقا راحتى نداشتم، بالاخره یکی از این شو فرها منو آورد بتهران ديکه من از آنوقت توی این خط افتادم

«...Անտեր ու միախնակ կինը մի քաղաքում ի՞նչ կարող է անել: Ես էլ ուրիշ գործ անել չգիտեի: Ուր, որ ուզում էի աղախին աշխատել, երիտասարդ լինելու պատճառով տան տիկինը չէր համաձայնվում: Ո՞ր տանն էլ, որ տիկին չկար, աղան ինձ հանդիստ չէր տալիս: Մինչև որ մի շոֆեր... ինձ բերեց Թեհրան և աչք օրվանից ես ընկա այս ճանապարհին...»:

Բ. Ալավիի հետագա տարիների ստեղծագործության մեջ երեվան են դալիս մի շարք այլ հերոսներ, որոնք մեծ առաջադիմական քայլ են կատարում խզելու իրենց հարաբերությունը հին կարգերի հետ: Նոր աշխարհայացքի հիման վրա, լիցքավորված պայքարի սևագույն ուժով նրանք ձգտում են ստեղծել նոր կյանք՝ զերծ բոլոր տեսակի շահագործումից ու միջնադարյան փթած սովորություններից: Նրանք այլևս չեն հեծում հուսահատության ու հոգեկան ապրումներից բխող հառաչանքների ծանրության տակ, ինչպես խոսրոն, երաժիշտը, Ֆորուղը և այլն:

«Հուշագրեր բանտից»¹ խորագիրը կրող պատմվածքների ժողովածուի մեջ Բ. Ալավին նկարագրում է կյանքի ավելի այլաճակ ու դաժան կողմերը: Իր բովանդակությամբ «Հուշագրեր բանտից» երկը հագեցված է բողոքի ցասկոտ կրակով ուղղված բոլոր տեսակի բռնության դեմ, և մյուս կողմից հասարակ ժողովրդի նկատմամբ սիրո զգացմունքներով: Գեղարվեստական այս երկը հանդիսացավ տիրող կարգերի անիրավությունները մերկացնող մեղադրագիրը: «Անհրաժեշտ է, տրպեսզի ապագա սերունդը տեղյակ լինի իր անցյալի մասին,—գրում է Բ. Ալավին,—իր գրքի առաջաբանում,—գիտենա թե ի՞նչ է իրենից ներկայացրել այդ սև ժամանակաշրջանը»²:

Իր այս երկի մեջ Բ. Ալավին աշխատում է ստեղծել իրական-

¹ بزرك علوی. ورق باره‌های زندان، تهران ۱۹۴۲

² Այսպես է անվանում Բ. Ալավին ռեզազայան 20-ամյա իշխանության շրջանը:

նության լաջն մի պանորամա: Նա պատկերում է իրանական բան-
տի առանձնահատկություններն իր վարք ու բարքով: Հեղինակը
ձգտում է ստեղծել ոչ թե առանձին անհատական կերպարներ, այլ
բանտում տառապող մասսաների ըմբոստ ոգին, նրանց անդու-
պաշարը թե՛ բանտից ներս և թե՛ բանտից դուրս եղած բռնապե-
տական արհամիրքների դեմ:

Ժողովածուի մեջ իր կոմպոզիցիայով ու հոգեբանական նուրբ
ճաշակով աչքի է ընկնում «Գիսաստղ» պատմվածքը:

Ռեզաշայան ոստիկանությունը ձերբակալում է դեմոկրատա-
կան հակումներով տարված Իրաշին նրա ամուսնության երեկոյին:
Աղջկա հայրը պատահամբ այդ լուրը ստանում է, այն ժամանակ,
երբ արդեն բոլոր հյուրերը հավաքված սպասում էին Իրաշին:
Զցանկանալով սգի վերածել իր աղջկա կյանքի ամենաերջանիկ
օրը, հայրը հայտարարում է հյուրերին, որ Իրաշը շատ անհրա-
ժեշտ գործի պատճառով ուշանալու է, և որ ուրախությունը կշա-
րունակվի:

Իրաշի նման ազատամիտ երիտասարդներով լի են իրանական
բանտերը: Նրանց խոշտանգումների են ենթարկում, որովհետև
նրանք համարձակորեն հայտարարում են «...միջազգային իմպե-
րիալիզմը ճնշում, տնչացնում է աշխատավոր ժողովրդին»¹:

Իրաշի կամքի տոկոսությունը դրսևորում է նրա գաղափարա-
կան կուռ համոզմունքները: «Ես կդիմանամ,— հայտարարում է
նա,— դուք ինձ չեք կոտրի: Ինչու՞ եք ուզում ոչնչացնել ինձ, միայն
նրա համար, որ ես ասում եմ այն, ինչում համոզված եմ—Իրանի
ժողովրդին դուք դեպի անկում եք տանում»²:

Հրաշունչ պաթոսով է կերտել հեղինակն իր 53 հոգու հերոսա-
կան կերպարները համանուն գեղարվեստա-հրապարակախոսական
երկում³:

Բանտում իշխող մռայլ մթնոլորտի ֆոնի վրա, Ալավին վար-
պետ վրձինով նկարագրում է 53 - հոգու պայծառ կերպարները:
Իրանի տառապյալ ժողովրդի շահերի պաշտպանությունը ոգեշնչ-
ում է նրանց ավելի աննկուն մնալ բանտի դժոխային խոշտան-
գումների դեմ: Գաղտնի ոստիկանությունը ամեն միշտ գործա-
դրում է մեղադրելու նրանց հայրենիքի դավաճանության մեջ և
որպես կոմունիստների դատապարտելու ցմահ բանտարկության:

¹ «Հուշագրեր բանտից», էջ 29:

² Նույն տեղում, էջ 26:

³ بزركعلوی، «نپناه و سه نفر» تیرم ۱۹۴۲

նայած որ դատարանի չինովնիկ անդամներից և ոչ մեկը գաղա-
փար անգամ չունեն կոմունիզմի մասին: «Գաղտնի ոստիկանու-
թյունը,— գրում է Ալավին,— կոմունիստների շարքին էր դասում
նույնիսկ Կարմիրն և Ֆրեյդը...»:

Հեղինակը ոգևորությամբ է խոսում իրանի դեմոկրատների
վեհանձն ղեկավար հռչակավոր հասարակական գործիչ դոկտոր
Բ. Էրսևի մասին:

Այդ հերոսը մինչև վերջին շունչը ոգևորում է ընկերներին,
խրախուսում նրանց, որ շուտահաստվեն ամենածանր դժվարու-
թյունների առաջ, քանի որ հաղթանակողը ճշմարտությունն է:
Ալավին սրբությամբ է պահում դոկտոր Բ. Էրսևի հիշատակը, նրա
պատգամներն ու ազնիվ ցանկությունները: Ալավին գրում է.

«Դոկտոր, հանգիստ եղիր: Մենք անգործ չենք նստել: Մենք
աշխատում ենք կատարել քո պատգամները և վաղ թե ուշ կգա
այն օրը, երբ մենք կիրականացնենք մեր ձգտումները, որոնք միև-
նույն ժամանակ քոնն էին»¹:

Բ. Ալավին պատմվածքներում իրենց ուրույն տեղն են գրա-
վում կանանց հերոսական կերպարները: Սոցիալական հակասու-
թյունների բախման պրոցեսում ճիշտ է նրանք երբեմն մնում են
միայնակ ու անօգնական: Հակադիր ուժերի անհավասարությունը
ճնշում է նրանց, դուրս է նետում հասարակական կյանքից: Ճե-
մակները² պատմվածքում հանձին Շիրինի առաջին անգամ իրա-
նական գրականության մեջ տեսնում ենք ժողովրդի շահերի հա-
մար մարտնչող, փողն ու հարստությունը արհամարհող իրանա-
կան կնոջ կերպարը: Վեհանձն ու բարձր սկզբունքի տեր այդ երի-
տասարգ աղջիկը ատելությամբ է լցված իր արկածախնդիր ու
ծայր աստիճան շահամոլ հարազատ հոր դեմ: Նրա համար զգվելի
է խարդախ ճանապարհներով դիզած հոր հարստությունը: Շիրինը
անդրդվելի է հոր աղերսանքների առաջ՝ տոմս վերադառնալ: Ժո-
ղովրդին ծառայելու սրբազան գործը նա ավելի բարձր է գնահա-
տում քան այն ճոխ ու հանգստավետ ապրուստի պայմանները, որը
«ստեղծել է» նրա համար հայրը: Շիրինը մենակ չէ: Նա հարել է
ժողովրդական պարտիայի անլեզալ կազմակերպությանը: Շիրի-
նին չեն սարսափեցնում բանտն ու աքսորը, քանի որ նա կանգնած
է իր ժողովրդի ազատության ճանապարհին:

Գաղափարական նույն սկզբունքով է գործում նաև Աշրաֆը,

¹ -53 հոգին», էջ 207:

² بزرگ علوی، نامہا، تهران ۱۹۵۲

«Դավաճան» պատմվածքում: «Մարդը պետք է լինի հասարակության սնդամ, անհատական շահերը չպետք է գերազանցեն հասարակական շահերին: Անհատները չեն ղեկավարում ժողովրդին»¹: Ահա այն համոզմունքները, որոնցով առաջնորդվում է Աշրաֆը:

Մահլաղա-խանումը «խայտառակություն» պատմվածքում հյուրերի առաջ դեմոնստրատիվ ձևով մերկացնում է իր ամուսին՝ Դորոսաֆարի «հեղինակության» ամբողջ գաղտնիքը:

Բողոքը Ալավիի պատկերած գյուղացի հերոսները թեև ճշմարտ է, խարխափում են խավարի ու տգիտության մեջ, սակայն չեն հաշտվում իրենց վիճակի հետ: Կարևորն այն է, որ նրանց բողոքը ելնում է գյուղի ընդհանուր շահերից: Նրանք բողոքում են գյուղում տիրող խավարի, աղքատության ու շահագործման դեմ, գյուղն ու գյուղացուն մոռացած քաղաքի դեմ:

Ծերունի Մաշ-Հուսեյնալին («Դեզաշուբ») ² երեսուն տարի շարունակ մեջքն է ծռել ու մշակել աղայի այգին: Հենց այդ հետամնաց գյուղում էլ ծերունի այգեգործը տեսել է իրանական գյուղի կյանքը նրա իրական լույսի տակ, որտեղ և սկսվել են Մաշ-Հուսեյնալու մտքում բուն գնել և ուր գաղափարներ ու և ուր ցանկություններ: Երեսուն տարվա ընթացքում այդ ծերունին տեսել էր, թե ինչպես Թահրանից մղոններ հեռու գտնվող այդ գյուղում ապրում է մի ամբողջ ժողովուրդ, որի վրա ծանրացած է կյանքի ամենադժվար բեռը: Այդ մարդկանց գոյությունը կարծես նվիրաբերվել է զոհաբերության: Ազնիվ այդ ծերունին ոչինչ չի խնայում, տրպանգի իր աղջիկը՝ Համիդեն քաղաքում բժշկություն սովորելուց հետո, վերադառնա գյուղ ու փրկի բնակչությանը հիվանդությունից ու մահից:

Այդ դառը իրականությունը լավ է ըմբռնում նաև «Ջուր» պատմվածքի հերոս՝ Ջաֆարը: Անարդարությունների դեմ պայքարելու պատճառով նա բանտարկվել, գանահարվել ու աքսորվել է: Նստած չոր բլրի վրա, հայացքը նետած դեպի մերկ ու անշրտի դաշտերը, նրա հիշողության մեջ արթնանում է գյուղացի երիտասարդ Թահերի արևախանձ դեմքը: Թահերին գյուղի խանձ ու ռեսը վռնդել էին գյուղից, զրկել տնտեսությունից, նրա նշանածին ձեռք ձգելու համար: Քաղցած ու ծարավ Թահերը մեռել էր անապատի այրող արևի տակ:

Մեծ ոգևորությամբ է կերտված Գիլեցու հերոսական կերպարը:

¹ Նամակներ, էջ 187:

² Գյուղ՝ Թահրանի շրջակայքում:

«Գիւնցի» պատմվածքում: Երիտասարդ Գիւնցին համագյուղացի-
ների հետ մեկտեղ ապստամբել է տարիներ շարունակ գյուղը թա-
լանող ֆեոդալ տերերի դեմ: Նրանք արդեն լավ են հասկանում
ժանդարմների կատարած անիրավությունները: «Դուք մեզ թալա-
նում եք,— ասում են գյուղացիները,— վրնդում եք մեր տնից ու
տեղից... Ձերբակալում եք գյուղացիներին: Էլ ոչ մի տնտեսու-
թյուն չթողեցիք մեզ համար»:

Բողոք Ալավիի ստեղծագործության մեջ ուշագրավ են նույն-
պես նրա սատիրական պատմվածքները, որտեղ հեղինակն աշխա-
տել է Իրանի ժողովրդին ներկայացնել հասարակության ընդերքում
գոյություն ունեցող արատները, դրսևորելով նրանց իր կերտած
րացասական հերոսների բնավորության գծերի ու սովորություննե-
րի մեջ:

«Պճնամուլ»¹ պատմվածքը Բ. Ալավին գրել է դեռ 30-ական
թվականներին: Այն տեղավորված էր նրա «Չամադան» ժողովա-
ծուի մեջ:

30-ական թվականները դա մի ժամանակաշրջան էր, երբ
Իրանի պրոգրեսիվ հասարակայնությունը մտահոգում էր երկրի
տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը: Իրանական
առաջավոր ինտելիգենցիան, այդ թվում և դեմոկրատ գրողները
ուղիներ էին փնտրում կապ հաստատելու ժողովրդի հետ, ձգտում
էին ծառայել իրենց հայրենիքի լուսավորությանն ու ազատու-
թյանը նպաստող ազնիվ ու պատվավոր գործին:

Սակայն երիտասարդության մեջ քիչ չէին նաև դատարկագը-
լուկա, բայց լիքը գրպանով մարդիկ, որոնք մի քանի փքուն ֆրազ-
ներ անգիր արած, իրենց համարում էին ազգային իսկական ինտե-
լիգենտներ: «Ինտելիգենտ» ֆրազի տակ նրանք հասկանում էին
եվրոպական ճաշակով հագնվելը: Երգիծաբանի մեծ հմտությամբ
Բողոք Ալավին նկարագրում է այդպիսի մի հասակը ու դատար-
կապորտ «ինտելիգենտի»՝ պարոն Նավա-Փուրին:

Այս պճնամուլը ներկայանում է մեզ, որպես մի «կրթված» ու
«դաստիարակված» մարդ:

Պարոն Նավա-փուրը մտադիր է ձմեռային արտակարգ նորա-
ձևությամբ մի վերարկու պատվիրել: Չէ որ պարոնի կարծիքով
«մարդուս դիրքը հասարակության մեջ մեծ մասամբ պայմանավոր-
ված է նրա վերարկուով»: Միայն վերարկուի ձևի ընտրության
համար պարոն Նավա-փուրը ուսումնասիրել է անգլիական և ամե-

¹ «Չամադան», شیک بهشت — պատմվածք:

րիկյան մողայի ավելի քան 20 ժողովներ, Երկու օր շարունակ բարձր ճաշակի տեր իր «ամկեղծ» ընկերների հետ խորհրդի էր նստել: Պարոն Նավա-փուրը ուսումնասիրել է այն բոլորը, ինչ որ անուղղակի կամ ուղղակի կերպով կապվում էր վերարկու հասկացողության հետ:

Այս պճնամուլի բացասական կերպարը ավելի է ողորմելի դառնում, երբ հեղինակն իր խոր դիտողությամբ նկարագրում է նրա մտավոր պաշարի «հարստությունը»: Զրույցի ժամանակ պարոն Նավա-փուրը սիրում է հաճախ գործածել «Բրիտանական էնցիկլոպեդիա» բառը: Նրա հասկացողությունը Դարվինի մասին սահմանափակվում է այսպիսի «ճշմարտությամբ», որ «Դարվինը այն մեծ հնարագետն էր, որի հնարած մեքենան կապկիճ հեշտությամբ կերպարանափոխելով մարդ դարձրեց»: Չնայած պարոն Նավա-փուրը որոշել է բանաստեղծ Սաադի նման կյանք վարել, այն է՝ երեսուն տարի ճամփորդել, երեսուն տարի ուսումնասիրել կյանքը և երեսուն տարի էլ ստեղծագործել, բայց նա հանդիսավոր կերպով հայտարարում է, որ ինքն ավելի բարձր է, քան Սաադին, որովհետև «Սաադին չգիտեր անգլերեն, չգիտեր, ո՞վ է էդիսոնը. չգիտեր կովերի արհեստական բեղմնավորման մասին»:

Բ. Ալավիի երգիծանքն այնպես նպատակասլաց է ու թունոտ, որ ընթերցողը ծիծաղելով հանդերձ, միևնույն ժամանակ ակամս կարեկցում է այդ մարդկանց ողորմելիությանը:

Պատմվածքի մեջ հեղինակը չի սահմանափակվում միայն պարոն Նավա-փուրի բացասական կերպարը խարազանելով: Պրճնամուլի զավեշտական այդ կերպարի միջոցով Բ. Ալավին պարսավանքի ու ծաղրի է ենթարկում Իրանի հասարակական կյանքում բոլոր դրած թերի կողմերը: Նա ցույց է տալիս ժողովրդի շահերը վնասող կեղծ ինտելիգենտների և գրողների կատարած շարշիական մեքենայությունները, նրանց անգրագիտությունն ու օտարամոլությունը: Օրինակ Նավա-փուրի այն հայտարարությունը,

«ما باید تر همه چیز از آروغتی های آریائی نزاد پیروی کنیم»

որ «Մենք պետք է ամեն ինչի մեջ արիական ցեղին պատկանող եվրոպացիների հետևորդը լինենք»:

50-ական թվականներին Բ. Ալավին գրում է իր «Տառներկուսից հինգ րոպե անց» պատմվածքը:

Հեղինակի ուշադրության կենտրոնում են գտնվում կապիտալիստական հասարակության մեջ ապրող երկերեսանի ու զեղծա-

1 Բ. Ալավի, «Զամադան», էջ 109:

րար մարդկանց կերպարները: Երգիծաբանի սուր հայացքով Ալավին կարողանում է գտնել խճճված թելի ծայրը և բաց է անում ամբողջ կծիկը: Կաշառակերությունը սկսվում է պետական ապարատում աշխատող բարձրաստիճան պաշտոնյաներից և աստիճանաբար վարակի պես տարածվում է հիմնարկի ամբողջ աշխատողների մեջ: Նույնիսկ ամենահասարակ դոնապանին էլ ստիպում են, որ հտ շմնա ուրիշներից:

Հիմնարկները, կառավարական աստիճանավորները, պետական թևերը իրար միացած կազմում են մի այնպիսի անանցանելի ցանց, որի մեջ ընկնողը հազիվ է ելք գտնում գլուխն ազատելու:

Ոման պարոն Քարբար նշանակվել է նոր պաշտոնի՝ անձնագրային կենտրոնական բաժնի վարիչ: Կառավարական թերթերը գովաբանում են նրա «պարտաճանաչությունը», «հայրենասիրությունը» և այդ նոր նշանակումը համարում են առաջադիմական մի մեծ քայլ հիմնարկների կատարելագործման աշխատանքի ճանապարհին: Սակայն իրականությունն այլ է: Պարոն Քարբարը իր շտրվն է հավաքել ստորագրա ֆախկին աշխատողներին և նոր մեթոդներով է վարում կաշառակերությունը:

Այդ մեթոդներից մեկը այն է, որ ժամը տասներկուսին այցելողներին պատճառաբանում են, թե ընդմիջում է, որովհետև ժամը 12-ից արդեն անց է: Սակայն այդ «անց» թույլենք անհիմաստ չեն: Յուրաքանչյուր թույլեն արժեք մեկ թուման փող: Ուրեմն եթե 12-ից անց է հինգ թույլեն, դա նշանակում է, որ դիմողը պետք է հինգ թուման կաշառք տա, որպեսզի նրա գործն անմիջապես ընթացք ստանա, այլապես ամիսներ շարունակ պետք է մաշի հիմնարկի դոնները:

Բ. Ալավին իր պատմվածքի սյուժեն վերցրել է Իրանի առօրյա կյանքի իրականությունից: Հեղինակն ուժեղ ցասումով պարսավանքի է ենթարկում բուրժուական կարգերում տիրող բյուրոկրատիզմն ու նրան բնորոշ նողկալի ախտերը:

Հիմնարկի պետերը, պառլամենտի դեպուտատները, պարագիտիզմը գովաբանող կաշառված մամուլը՝ բոլորը աներևույթ թելերով կապված են միմյանց հետ:

Բ. Ալավիի երգիծանքում ցայտուն կերպով արտահայտված են բուրժուական հասարակարգի ընդերքից ելած այդ մարդկանց լացասական կողմերը: Հասարակ մարդը, դոնապանը և ամենաստորին ծառայողը ներկայացված են, որպես սոցիալական կյանքի զոհեր: Կյանքի այդ պայմանները ճահճի պես ներծծում ու կլանում են մարդկանց:

«Արթն ես չգիտեմ, որ իմ դիրեկտորը կաշառակեր է,— ասում է անձնագրային բաժանմունքի պաշտոնյան,— հույս ունենանք, որ կգա ժամանակ, երբ հիմնարկի դիրեկտորները կդադարեն կաշառք վերցնելուց, ես էլ իմ հերթին խոսք եմ տալիս անհապաղ ընթացք տալ ինձ դիմողների գործերին, թող դա լինի տասներկուսից անց կամ պակաս»:

Բ. Ալավին իր երգիծական պատմվածքներում չի դիմում միտումնավոր չափազանցությունների կամ գրոտեսկի: Նա նկարագրում է իրականությունը ինչպես որ կա, առանց շինծու ձևերի:

Պետք է ենթադրել, որ Բողոք Ալավին դիտավորյալ կերպով է հրաժարվել իր երգիծանքի մեջ հիպերբոլ պատկերներ մտցնելուց: Դա պետք է վերագրել այն բանին, որ Իրանի ժամանակակից զավեշտական թերթերում ու հանդեսներում մասսայաբար տպագրվում են անիմաստ ու էժանագիւն և երբեմն էլ ցինիզմի հասնող բազմաթիվ ոտանավորներ ու ֆելիետոններ, որոնք ընթերցողների մոտ մեծ ծիծաղ են առաջացնում: Այդ երևույթը այնքան տարածում է գտել ժողովրդի մեջ, որ աստիճանաբար նսեմացնելով երգիծանքի ու հումորի բուն նպատակն ու իմաստը վերածել է այն մի ինչ-որ ծիծաղելի ժամանցի:

Բողոք Ալավին անշուշտ նկատի է ունեցել այդ հանգամանքը: Հաշվի առնելով իրեն լսող աուդիտորիան նա աշխատել է խուսափել այն հիպերբոլային հնարվոր դետալներից, որոնք կարող էին լուկ զվարճալից ծիծաղ պատճառել պարսիկ ընթերցողին, շեղելով նրան երգիծանքի տղտալական խնդիրները շոշափող նշանակությունից:

Գուցե հեղինակի այդ մաներան իշեցնում է նրա երգիծանքի լիարժեք գնահատականը: Բայց և այնպես, Բ. Ալավիի այս երկու հումորեսկ ստեղծագործությունները, դարձյալ վկայում են հեղինակի լավատեսության, լավ ապագային հասնելու նրա շերմ հավատքի մասին:

Բ. Ալավիի գառը ծիծաղը բացահայտում է Իրանի հասարակության մեջ գոյություն ունեցող սուր հակասությունները: Նրա պարզ երգիծանքը պետք է համարել անաչառ քննադատության ձևերից մեկը: Հեգնանքը հեղինակի կողմից միջոց է, որի օգնությամբ նա ձգտում է կենտրոնացնել Իրանի հասարակայնության ուշադրությունը կյանքի մռայլ ու բացասական կողմերի վրա:

* * *

40-ական թվականների իրանական գեղարվեստական արձակի մանրամասն ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզմունքին, որ իրենց ստեղծագործություններում, ընդհանուր առմամբ, պարսիկ ժամանակակից գրողները արտացոլում են երկրի դասակարգային պայքարի ու սոցիալական կյանքի սուր հակասությունները:

Գրականության զարգացման ներկա էտապում իրանական հեղինակների մոտ դեռևս իրենց պատշաճ արտացոլումը չեն գտել աշխատավորության ու ժողովրդական մասսաների շարժումները, այն դեպքում, երբ իրանական ժողովրդի պայքարի պատմությունը կարող է մատուցել բավականին ուժեղ ու բովանդակալից թեմաներ, որոնց արժարժումը կարող է դրական մեծ նշանակություն ունենալ նոր սերնդի դաստիարակության հարցում: Ընտրված հերոսների կերպարները գլխավորապես հանդիսանում են առաջավոր ինտելիգենցիայի կամ գյուղացիական դասակարգի ներկայացուցիչները: Բանլորի կերպարը շատ հազվագյուտ է արդի իրանական գրականության էջերում: Մինչդեռ Իրանի բանվոր դասակարգը վերջին տարիների ընթացքում զգալիորեն աճել ու ամրապլնդվել է և նրա շարքերում քիչ չեն այնպիսիները, որոնց կերպարների գեղարվեստական մարմնավորումը առավել չափով կարող է հարստացնել նոր գրական ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունը: Մյուս կողմից այդ հեղինակների մոտ մասամբ անհամոզեցուցիչ է առաջադեմ գաղափարներով օժտված հերոսների կերպարները: Թվում է, թե նրանք աշխարհ են մտել ուղղուցիտն պայքարի բնածին հատկություններով: Այս հանգամանքը որոշ դեպքերում իշեցնում է ստեղծագործության գեղարվեստական արժեքը, տալով նրան սխեմատիկ բնույթ:

Սակայն Ալավին իր ստեղծագործությամբ որոշ չափով նպաստեց քննադատական ունալիզմի զարգացմանը իրանական գրականության մեջ:

Բողորգ Ալավին խորապես զգալով սոցիալական կյանքի էական հարցերը, իր ժողովրդի ձգտումներն ու երազանքը, համարձակորեն խարազանեց նաև ժողովրդի թշնամիներին, կաշառված դատավորներին, վաշխառուներին, գյուղական ցեցերին և կեղծ ու դիմակավորված դեմոկրատներին: Նա տեսավ Իրանի աշխատավորության ու առաջավոր ինտելիգենցիայի դառը տանջանքները, անսահմանորեն սիրեց նրանց ու հավատաց նրանց ուժին:

Ալավին շահմանափակվեց միայն իշխող դասակարգի սոսկալի խոցերը ցույց տալով, նա ստեղծեց այնպիսի կերպարներ, որոնք հանդես են գալիս հասարակական կարգերի ստրկացնող գործողների դեմ: Նրա հերոսները, թեկուզ իրենց ողբերգական վախճանով, միշտ ուժոված են նորի, առաջավոր գաղափարների համար մարտնչողի բարձր հատկանիշներով:

Ակնհայտ է այն փաստը, որ Բ. Ալավին տեսնում է իրանական ժողովրդի դիմաց կանգնած մի ընդհանուր անբարիշտ թշնամի — կապիտալիստական հասարակարգը: Անհատ մարդիկ որքան էլ նրանք հանցավոր լինեն և դժբախտ, հասարակական կյանքի գոհ են:

Г. О. МОВСЕСЯН

ОБРАЗ НОВОГО ГЕРОЯ В НОВЕЛЛАХ БОЗОРГА АЛАВИ

Р е з ю м е

В годы второй мировой войны, после падения деспотического режима Реза-шаха, развитие демократических сил в Иране позволило прогрессивным писателям смелее выражать свои взгляды. В этот период впервые обнаруживается тенденция поставить литературу на службу народным интересам.

В борьбе против внутренней реакции и англо-американских империалистов появляется ряд передовых писателей, которые стремятся правдиво отразить события внутри страны и освободительную борьбу родного народа.

Одним из лучших писателей послевоенного периода по праву считается известный прозаик Бозорг Алави. В своих произведениях он бесстрашно бичевал врагов народа — продажных судей, взяточников и лжедемократов. Вместе с тем Б. Алави создал образы прогрессивных героев, выступавших против реакционных общественных порядков и традиций.

В его новеллах мы видим истинных сынов Ирана, стоящих на страже интересов народа. Герои Б. Алави наделены качествами, присущими борцам за новое, людям, не боящимся трудностей и смело смотрящим в будущее. Им чужды ограниченность, пассивное мироощущение и эгоизм. Эти герои были списаны писателем с жизни, где он зорким глазом подмечал все новое, растущее и прогрессивное.